ԱՂԱՎՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՓԱՋԼ

Մորս

Քանիցս որոշում ու նորից հետաձգում եմ առաջին բառը գրի առնելը, ճիշտ նույն կերպ հետո պիտի երկարաձգեմ վերջին փազլահատիկը տեղադրելը:

Սկիզբը մի՛շտ է բարդ. «պատասխանատվություն», «երկյուղածություն», նման ու տարբեր հատկանիշներով ես որակում, մեկ է՝ ուզածդ գույնին, ուզածդ խտությանը չես հասնում: Չե՛ս հասնի...

Մինչ աչքերս ու միտքս փնտրում են՝ տարբերակելու ու գտնելու համար այն «առաջին»-ը, որ սկիզբը պիտի լինի, ձայնը հուշում է.

- Սկսել ես՝ արդեն, վաղո՛ւց...

* * *

Անցյալ գարնանը դեռ, բարեգործական մի երեկոյի մասնակցության համար, ու մեծ փաթեթավորված տուփը հետս տուն եկավ և հենց նույն օրը մոռացվեց պահարանի վերին դարակում: Մինչև որ հազա՜ց, հազա՜ց ու խեղդվողի ձայնով կանչեց.

- Ջո՛ւր...

Ձայնը ճանաչեցի:

Այդպես, մի տարի ու մեկ ամիս անց մեծ փազլը, իր հազար մասնահատվածով հայտնվեց սեղանիս ու ինձ անշարժ գամեց սեղանի առաջ համարյա տասնութ ժամ:

Առաջին անգամ պիտի մեծ նկար ստանամ: Քիչ անց արդեն հասկացա, որ հազարերորդ մասնիկն ինձնից նույնքան հեռու է, որքան երկու թաղամաս այն կողմ, կլոր հրապարակի կենտրոնում կանգնած մարմարակերտ ճանապարհորդը ժամանակին՝ իրական Հնդկաստանից:

Անփորձությունս հանդուգն հայտարարեց՝ հառա՛ջ:

Ձայնը լռել է, ներկայությունը զգում եմ: Եթե կարևոր չլիներ, չէր նախաձեռնի այս ամենը, ուստի շարունակում եմ:

Մինչ տրամաբանությունս ու համառությունս վիճում են՝ յուրաքանչյուրն իր ճշմարտացիության մեջ համոզված, ես մտածում եմ ամբողջական պատկերը ստանալուց հետո ո՞ր պատին հարմարեցնեմ: Հյուրասենյակի պատերը վաղուց զբաղված են, խոհանոցն ու նեղլիկ միջանցքը՝ անհարմար: Ննջարանի պատը՝ որոշում եմ, երբ ոգևորված անփորձությունս հանկարծ հրճվանքի ճիչ է արձակում խճանկարի համապատասխան հատվածը գտնելով:

Համառությունս տեղը-տեղին սնունդ ստացած, հաստաջիլ բազուկներով, որոշել է ցանկապատից այն կողմը տեսնել, ցանկապատն էլ ամեն ինչ անում է, որ չբացվի դեպի կանաչ ծառուղին: Մի քանի աղյուսահատիկ հայտնվել են կողք կողքի, պատահականությունն օգտվում է առիթից, արագորեն հավաքում արևելյան պատն ու հասնում երկրորդ հարկին:

Դուռը չեմ գտնում, բայց այս պահին այդքան էլ մտահոգ չեմ դրանով, ինձ անհանգստացնողը ցանկապատն է, դեռ համառորեն դիմադրում է: Փորձում եմ հասկանալ պատճառն ու պատասխանը փնտրում. երկինքը՝ մտածում եմ ես ու... սխալվում: Մեկ ժամ «վերևներում» անարդյունք փնտրտուքից հետո վերադառնում եմ: Այս անգամ գտնում հողագույնը: Ցանկապատից այն կողմ ծառուղին կենդանանում է, իսկ հողագույնը կանաչի է փոխվում վերջապես:

- Կեցցե՛ս, - հաստատում է ձայնն ու իր կողմից երկու քարտ բացում, - մեկը դուռն է: Աչքերս մրմռում են, հոգնածությունն իր հետ ճանձրույթ կբերի, իսկ նկարը որևէ պարագայում կիսատ թողնել չի կարելի:

Նոր հատվածների շնորհիվ պատկերը միանգամից փոխվեց: Եթե, իմ պատկերացմամբ, ցանկապատն ի սկզբանե խանգարում էր տեսնել ծաղիկները, հիմա, ցանկապատից դուրս, շղահար ու կոտրվելու աստիճան թեքված ծառաբնից կռահում եմ. ցանկապատը պաշտպանում է ծաղիկները Հյուսիսի քամուց, իսկ ծաղիկներ հաստատ կան, թեկուզ ոչ տեսանելի:

Հիմա էլ անհամբերությունն է դոփում՝ թմրած ոտքերս իրեն դաշնակից

դարձրած, ու շտապեցնում: Այս անգամ էլ ծառուղի չհասա, փոխարենը տան պատը բարձրացավ Արևմուտքից ու եզրագծվեց տանիքով;

- Դո՛ւռը, - հուշում է ձայնը:

Դուռը բաց է. հենց այդ պահին միջանցիկ քամին խառնեց մազերս ու ավերածություններ հեղինակելու ակնհայտ դիտավորությամբ «անցավ» պատկերի՝ արդեն հավաք հատվածին: Ափով հազիվ եմ պահում երկրորդ հարկի պատուհանը: Քամին կատաղեց: Պատերը թեքվեցին, մոտեցան, նեղացան ...

- Երգի՛ր, - հրամայեց ձայնը:

Չգիտեմ՝ ինչպե՞ս. լսում եմ ինձ կողքից՝ ոչ իմ ձայնով երգում եմ ու ինչքան բարձր եմ երգում, այնքան նահանջում է քամին՝ ներսիս քամին...

Ձեռքս կապտել է, դեռ դողում է, իսկ քամին չկա:

Առաջին հարկն, այնուամենայնիվ, վերականգնելու կարիք եղավ:

Վերջին հատիկը երկարաձգում եմ տեղադրել... ինչպես առաջին բառն էր, ինչպես ձայնն էր, որ կար բառից առաջ՝ մեղեդուն զուգահեռ: Ու համոզվելուց հետո միայն, որ երկրորդ հարկի պատուհանիկը ապահով է, աչքերս փակվում են՝ ափիս մեջ ամուր սեղմած օրորոցով:

Ձայնը դեռ երգում է՝ ինձ գրկած...

Կայուն գրական հանդես